



«ՅԱՅՄԱՐԱԽՈՒՐՔ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ»

ՀՍՀ ԳԱ Մանուկ Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի կողմից վերջերս լույս տեսավ կարևոր մի ուսումնասիրություն, որը վերնագրված է «Յայսմաւորք ժողովածուները և նրանց պատմագրական արժեքը»: Աշխատության հեղինակն է Մ. Թ. Ավդալբեկյանը: Հրատարակությունը շատ կարևոր ներդրում է միջնադարյան հայ գեղարվեստական արձակի սկզբնավորման, նրա անցած ուղու և առանձին ժանրերի ուսումնասիրության հետ կապված հարցերի պարզաբանման համար: Գիրքը բաղկացած է երեք բաժիններից և հավելվածից: Հեղինակի նպատակն է եղել լուծել «Յայսմաւորք» ժողովածուների ծագման և վարձագման հետ կապված խնդիրները, ցույց տալ, որ նրանց հետ առնչվող չորս խմբագրությունները տարբեր են ոչ միայն տարբեր դարերում խմբագրական փոփոխությունների հետևանքով, այլև այն պատճառով, որ ուղղակի կապ ունեն հայ հասարակական կյանքի տարբեր շրջանների քաղաքական կողմնորոշման հետ: Հակառակ ձեռնարկված գործի հետ կապված առարկայական դժվարություններին, ուսումնասիրողը կարողացել է լուծել իր առջև դրված խնդիրները: Լինելով հայ միջնադարյան գրականության մասնագետ, հարգարժան ուսումնասիրողը հատկապես ուշադրություն է դարձրել «Յայսմաւորք» ժողովածուների գրական-գեղարվեստական առանձնահատկություններին: Թեև ուսումնասիրության մեջ հատուկ տեղ չէ հատկացված «Յայսմաւորք» մատյանների կրոնական արժեքին, սակայն հրատարակությունը շատ կարևոր ելրահանգումներ ունի

և ճանաչողական ու ուսուցողական տեսակետից շատ օգտակար է նաև մեզ՝ եկեղեցականներիս համար:

Գրքի առաջին բաժինը վերնագրված է «Հայ գեղարվեստական արձակը արարողական գրականության շերտերում»: Այս վերնագրի տակ համառոտակի խոսվում է Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցում ամենօրյա ժամերգությունների ընթացքում օգտագործվող ծիսական մատյանների մասին, որոնք անբաժան մասը կապվելով մեր Եկեղեցու ծեսին՝ մեծապես նպաստել են նաև Հայ Եկեղեցու ազգային դիմագծի և ինքնության պահպանմանը: Բացի մեզ ծանոթ ծիսական մատյաններից, վաղ միջնադարից սկսած, մեր եկեղեցիներում կամ կրոնական հանդիսությունների ժամանակ, ինչպես ասվում է ուսումնասիրության մեջ, օգտագործվել են նաև «Յայսմաւորք», «Վկայագիրք», «Գանձարան», «Քարոզգիրք» և այլ մատյաններ, որոնք իրենց բովանդակությամբ բացառապես կրոնական լինելով հանդերձ «ունեցել են մարդկանց գիտակցության ու զգացումների վրա ներգործելու, բարոյակրթելու և այլ հատկանիշներ, որով դուրս են եկել նեղ արարողական սահմաններից ու ծավալվել մինչև գեղարվեստական գրականության ոլորտները, արարողական լինելով հանդերձ նրանք օժտված են գրական-գեղարվեստական արժեքով»:

Հեղինակը կոտ տրամաբանությամբ ընթերցողին է հասցնում այն միտքը, թե միջնադարյան մեր գրական ու պատմական աղբյուրները որոշակի խմբագրման են ենթարկվել դարաշրջանի պահանջների հա-

մեմատ: «Յայսմատութիւն» ժողովածուները նույնպէս, լինելով միջնադարյան կրօնական, գրական ու պատմական աղբյուր, անխուսափելիորեն ենթարկվել են խմբագրման՝ «սեբոնդներին թողնելով դարաշրջանը ներկայացնող մնայունը՝ ժամանակի ընդհանրացված, կերպավորված վերարտադրումը, մարդու միջոցով ընկալված միջավայրի գնահատականը՝ համամարդկայինն ու ազգայինը, համաժողովրդականն ու պատմականորեն առաջիմականը»: «Յայսմատութիւն», «Տոնական», «Ճառքնտիր» և այլ ժողովածուներ խմբագրել և նրանցում որոշակի փոփոխություններ ու ազգային սրբերի տոներ են մտցրել հիմնականում Գրիգոր Բ Պահլավունի Վկայասեր (1066—1105 թթ.) և Գրիգոր Անավարպեցի (1293—1307 թթ.) կաթողիկոսները, ինչպէս նաև Վանական վարդապետի աշակերտներ՝ Խաչենի եպիսկոպոս Տեր Իսրայելը, Կիրակոս վրդ. Արևելցին և Գրիգոր Ծերենց Խլաթեցի նահատակը: Հեղինակը խոսելով «Յայսմատութիւն» ժողովածուների խմբագրական փոփոխությունների մասին, եկել է այն եզրակացության, որ նրանք («Յայսմատութիւնները») չունեն ոչ միայն որոշակի ու ճշգրտված բովանդակություն, այլև դրանցից մի մասի վրա որոշակիորեն զգացվում է հունական «Յայսմատութիւններ» ազդեցությունը, ուրիշ մի մեծ խումբ ձեռագիր «Յայսմատութիւններ» վրա՝ լատինական և եբրայա-ասորական համաձայն ժողովածուների ազդեցությունը: Մեկ հասած «Յայսմատութիւն» մատյանների մի մասն էլ անվիճելիորեն իր վրա ունի հայկական կնիք:

Հայոց եկեղեցիներում մինչև Ժ դարը փաստորեն գոյություն չունեն «Յայսմատութիւն» լրիվ թարգմանությունը: Այն մեզանում առաջին անգամ թարգմանվել է Հովսեփ Կոստանդնուպոլսեցու կողմից 991—992 թթ. վականներին: Մինչ այդ մեր եկեղեցին օգտագործում էր առանձին թարգմանված սղորքոց վարքերը: Ուսումնասիրողը համեմատելով «Տոնական» և «Ճառքնտիր» ժողովածուների բովանդակությունը, ցույց տալով նրանց տարբերությունները և արժեքավորելով դրանք որպէս գրական ժողովածուներ, եկել է այն եզրակացության, որ «Յայսմատութիւն» ժողովածուների հիմքում ընկած են գլխավորապէս ճառքնտիրները, ինչ-որ չափով նաև՝ «Տոնականները», թեև դրանցից և ոչ մեկը հատկապէս չի հանդիսացել հայ «Յայսմատութիւն» նախահիմքն ու նախօրինակը: Կարևոր իրողություն է նաև այն փաստը, որ թե՛ «Ճառքնտիրները» և թե՛ «Տոնական» ժողովածուները թեև սկիզբ են առել համաքրիստոնեական նույնանուն ժողովածուներից,

սակայն մեր եկեղեցու երանելի հայրերը, թարգմանելով դրանք, նախապէս տվել են դրանց ազգային դիմագիծ, հարմարեցրել են մեր եկեղեցու և ազգի շահերին և դրանից հետո միայն դարձրել մեզ համար ծիսական սրբական մատյան:

Գրքի այն էջերում, որտեղ խոսվում է «Ճառքնտիրների» և «Տոնականների» խմբագրությունների մասին, իր ամբողջ տիտանական մեծությամբ, ազգի և Ս. եկեղեցու շահերի նկատմամբ իր ունեցած մտահոգություններով մեր առջև է կանգնում Գրիգոր Բ Վկայասեր Պահլավունի Հայրապետը, որը սերում էր Պահլավունիներից: Նշանավոր այս Հայրապետն էր, որ հեռավոր Կիլիկիայում, բազմելով Հայոց Հայրապետական Գահին, մարգարեական հեռատեսությամբ գուշակում էր գալիք ժամանակների անմխիթար ու դժբախտ այն վիճակը, որին պիտի ենթարկվեր Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռը Կիլիկիայում: Գուցե այդ է պատճառը, որ բազմերախտ Հայրապետը, ականատես լինելով իր ժողովրդի, եկեղեցու և օտար նվաճողների ողորմածությանը հանձնված Մայր Հայրենիքի անմխիթար ու դժբախտ վիճակին, ելք էր որոնում Հայրապետական Աթոռի հետ միասին հայրենադարձվելու հավերժական Արարատի հովանու ներքո գտնվող քրիստոսահաստատ Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Միայն քաղաքական դժբախտ պարագաները խանգարեցին մեծ Հայրապետին այդ օրերին իրականացնելու հայրենադարձությունը: Նշանավոր այս անձի հետ է առնչվում մեր «Ճառք» գրքի մեջ փոփոխություններ մտցնելու ճանապարհով մի նոր «Ճառք» գիրք ստեղծելու ջնդրակալ գործը, որն ինչ-որ չափով նման էր օտարածին «Յայսմատութիւն» իր կայուն օրերով, բայց նաև ներառում էր իր մեջ հայկական սրբերի հիշատակին նվիրված տոները: Փաստորեն մինչև Գրիգոր Բ Վկայասեր կաթողիկոսի ժամանակները (ԺԱ—ԺԲ դդ.) Հայաստանյայց եկեղեցում չկար սրբոց տոնակատարության տոմարական միօրինակություն: Այդ հանգամանքը հսկայական դժվարություններ էր ստեղծում եկեղեցականների համար: Բազմերախտ Հայրապետը, կայունացնելով «Ճառք» գրքում եղած տոնակարգը, հաստատեց նաև ազգային սրբոց տոներ՝ համապատասխան սաղմոսներով և ընթերցվածներով: Ուսումնասիրողը հենց այս փոփոխություններն էլ համարում է «Ճառքից», «Յայսմատութիւն» տանող ճանապարհի առաջին քայլը: «Յայսմատութիւն» և «Ճառք» մատյանների ստեղծման ակունքները բոլոր եկեղեցիների համար բնականաբար նույնն են, բայց Հայաստանյայց եկեղեցու և մեր ժողովրդի հա-

մար դրանք կրկնակի կարևորություն և արժեք են ստանում, քանի որ այդօրինակ սըրբական մատյաններ ստեղծելու, օրինականացնելու և ամրապնդելու գործի հետ մեկտեղ մեր Եկեղեցու սրբական հայրերը մտահոգված են եղել նաև դրանց ազգային շունչ ու հոգի տալու շատ կարևոր խնդրով: Այսպիսի ազգային ու եկեղեցական մեծ հոգսերով ապրող գործիչ էր Գրիգոր Բ Պահլավունի Վկայասեր կաթողիկոսը, որի կատարած տիտանական աշխատանքը «Ճաշոց» գրքի հայկականացման գործում, մեծապես գնահատելի է, հատկապես, երբ նկատի ունենանք ԺԱ դարի Հայ Եկեղեցու և հայ հայրենիքի ծանր վիճակը, մանավանդ որ «Չայս ևս մտածեալ, եթէ վերկու պսակն փառաց յոյնք առ ինքեան տարան ի հայոց մեծաց՝ զկաթողիկոսութիւն եւ պթագաորութիւն» (էջ 39): Վկայասեր Հայրապետի ստեղծած «Ճաշոց» գիրքը իր տոմարական ամսաթվային կայուն տոնակարգով, ազգային սրբոց շարքով և մասնավորաբար իր ազգային շնչով ու ոգով սահմանապատելու էր գալիս հույների կողմից վտանգի ենթարկված Հայաստանյայց Եկեղեցին ու հայ ժողովուրդը՝ սատարելով նրանց ինքնուրույնության պահպանմանը:

Հայ «Յայսմատուրքների» ծագումը փաստորեն սկսվում է Գրիգոր Բ Վկայասեր կաթողիկոսի կողմից «Ճաշոց» գրքի դասավորումով, որը հետագայում Խաչենի եպիսկոպոս Տեր Իսրայելի և Կիրակոս Արևելցու ջանքերով հարմարեցվում է Հովսեփ Կոստանդնուպոլսեցու կողմից թարգմանված 991—992 թթ. հունական «Յայսմատուրքի» տոնակարգին՝ առավել ճոխացնելով այն հայ ազգային սրբոց շարքով:

Բավական բարդ և դժվար ճանապարհ է անցել հայ «Յայսմատուրքը», որն իր ազգային շնչով ու ոգով եղել է «հայ միջնադարյան մարդու հոգեկան աշխարհը ձևավորող կարևոր մի հուշարձան»: Աշխատասիրողը գիտական մեծ բարեխղճությամբ և պրոֆեսիոնալ բարձր մակարդակով բանասիրական քննության է ենթարկել Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում և մյուս ձեռագիր հավաքածուներում պահվող բազմաթիվ «Յայսմատուրքներ»՝ ձեռագրական համեմատական աշխատանք կատարելով դրանց վրա: Համեմատական շատ ծանր ու բծախնդիր այդ աշխատանքից հետո միայն ուսումնասիրողին հաջողվել է ի հայտ բերել մեզ հայտնի չորս խմբագրությունների բովանդակության և տոմարական դասավորության տարբերությունները: Այդ բոլոր խմբագրությունների հիմքում ընկած է Տ. Իսրայել եպիսկոպոսի կողմից խմբագրված հայաշունչ

«Յայսմատուրքը», որի «Դիմագիծն ու դեմքը լրիվ հայկականացրեց, ազգայնացրեց, հարուստացնելով այն հայ իրականության արտացոլումով, հայ կյանքի դրվագներով և հայ գործիչների սրբացման պատմություններով»: Տ. Իսրայել եպիսկոպոսը այդ աշխատանքը կատարեց մոնղոլական տիրապետության ծանր պայմաններում, երբ մեր բազմաչափ հայրենիքը դժոխք էր դարձել, որտեղ միայն հոգով ուժեղ մարդիկ կարող էին դիմանալ, և իրենց դժբախտ հայրենիքի սիրո համար հանձն առնել սովը, աղքատությունը, հարապատների կորուստը, մարդկային արժանապատվության նվաստացումը: Անսահմանորեն դաժան ու անորոշ այդ ժամանակներում Խաչենի Տ. Իսրայել եպիսկոպոսը, ելակետ ունենալով մեր Եկեղեցու և ազգի շահերը, «ստեղծել է ազգային կյանքն արտացոլող կրոնական ու պատմա-քաղաքական նպատակներ հետապնդող մի «Յայսմատուրք», որը ամեն օր գործածության մեջ լինելով՝ սատարելու էր ազգապահպանման և եկեղեցապահպանման վսեմ գործին»: Եկեղեցապաշտպան ու հայրենապաշտպան այս մտահոգությունն էր միացնում Գրիգոր Վկայասեր կաթողիկոսին, Տ. Իսրայել եպիսկոպոսին, Կիրակոս Արևելցուն և Գրիգոր Ծերենց Խլաթեցուն, որոնք դարձան հայ «Յայսմատուրքի» խմբագրողներն ու սրբական այդ Մատյանին հայկական դիմագիծ, ոգի ու շունչ տվողները: Մեր Եկեղեցու և մշակույթի պատմության մեջ երախտագիտությամբ պիտի հիշվի հայաշունչ խմբագրությամբ «Յայսմատուրքը»՝ խոր հարգանքի արժանացնելով նրա հեղինակներին, որոնց ջանադիր աշխատանքի շնորհիվ մեր Եկեղեցին ԺԳ դարի կեսերից սկսեց գործածել համաքրիստոնեական, բայց նրա հայկական խմբագրության շնորհիվ ազգային կերպարանք ստացած «Յայսմատուրքը»:

Ներկայացվող գրքի երրորդ բաժինը վերնագրված է «Յայսմատուրք ժողովածուների պատմագրական արժեքը»: Այս գլխում հարգելի ուսումնասիրողը «Յայսմատուրքները» ներկայացրել է որպես գրական ու պատմական արժեք ունեցող գործեր: Մասնագիտական վերլուծության եթևարկելով գրքում ընդգրկված ողջ նյութը, հեղինակը ընթերցողին ամենաառնչիչ փաստերով պարզաբանում է, որ «Յայսմատուրքում» տեղ գտած սրբերի, մանավանդ ազգային սրբերի վարքերում ըստ էության արտացոլվել են որոշակի պատմական ժամանակահատվածի երևույթներ, որոնք ավելի են հարստացնում ու գրավիչ դարձնում այն: Այս իմաստով, «Յայսմատուրքը» մեծապես օգտակար կարող է լինել նաև հայ միջնադարյան պատմության հար-

ցերով պաշտօնը պատմաբանի, աշխարհագրագետի և մեր հարևան ժողովուրդների պատմությունը ուսումնասիրող գիտնականների համար, քանի որ սրբի կյանքը նկարագրողը ամենահավաստի լրացուցիչ տեղեկություններ էր հաղորդում նաև ժամանակակից դեպքերի, քաղաքական ու կրոնական կարևոր անձանց մասին:

«Յայսմատուրքը» միջնադարյան Հայաստանի բնակիչների համար եղել է ամենասիրելի և շատ կարդացված մատյաններից մեկը: Միջնադարում այն փաստորեն հանրագիտարանի դեր է կատարել, քանի որ սրբական այդ մատյանի միջոցով հայ մարդը ոչ միայն ճանաչել է ընդհանուր Եկեղեցու աչքի ընկնող սրբացած դեմքերին, այլև իրապես է դարձել հայ ժողովրդի պատմական ճակատագրի մեջ բախտորոշ դեր կատարած այնպիսի իրադարձությունների, ինչպիսիք էին քրիստոնեության մուտքը Հայաստան (Ս. Գրիգոր Լուսավորչին նվիրված տոներ), Հայ գրի՝ և գրականության սկզբնավորումը (Ս. Մեսրոպ Մաշտոց, Ս. Սահակ Պարթև և Թարգմանչաց տոներ), ապատագրության պայքարի էջերից՝ Վարդանանց և Ղևոնդյանց հերոսամարտը, արաբական տիրապետության շրջանից՝ Վահագն Գողթնեցու և Նախիջևանի նահատակությունները, սելջուկ-մոնղոլական ջրջանից՝ Խոսրով Գանձակեցու և Հովսեփ Դվնեցու նահատակության պատմությունները և այլն: Նույնքան ունանելի ու կարևոր են նաև անհատ կրոնական ու ազգային սրբացած մեծ գործիչների՝ Ստեփանոս Սյունեցու, Գրիգոր Նարեկացու, Գրիգոր Վկայասերի, Ներսես Շնորհալու, Գրիգոր Տաթևացու և այլոց վարքերը, որոնց շնորհիվ սերունդների հիշողության մեջ ամրապնդ-

վում էին մեր ժողովրդի և Հայաստանյայց Եկեղեցու անցյալի պատմության հերոսական ու փառավոր էջերը: Ազգի, հայրենիքի և Հայոց Առաքելական Եկեղեցու անկախության և հարատևման համար մարտնչած, տառապած, պատերազմի դաշտում նահատակվածները դառնում էին սրբացած կերպարներ և Եկեղեցու միջոցով խոսում սերունդների հետ, արթուն պահելով նրանց հայրենասիրության և եկեղեցասիրության ոգին:

Ավարտելով սույն գրքի ուշադիր ընթերցումը՝ կհնոժապավենի նման գիտակցությանը միջից անցնում են «Յայսմատուրքում» տեղ գտած ազգային և ընդհանուր Եկեղեցու սրբացած դեմքերը, որոնք մարտիրոսացան և իրենց թափած արյամբ ամրացրին Քրիստոսի Եկեղեցին: «Յայսմատուրքը» դարերի բովից անցած սրբական այն մատյանն է, որի բյուրեղյա բովանդակությունը, խստապահանջ ժամանակի ընկալմանը դիմանալով, մշտապես օգնել է մարդկանց լինելու ապնիվ, հոգով մաքուր, բարեպաշտ, եկեղեցասեր:

Մ. Թ. Ավդալբեկյանի հեղինակությամբ հրատարակված սույն ուսումնասիրությունը մեծ ավանդ է հապարամյա դպրություն ունեցող մեր ժողովրդի միջնադարյան գրականության և նրա առանձին ժանրերի ուսումնասիրման հետ կապված կնձռոտ ու դժվարին հարցերի լուսաբանման գործում:

Հրատարակությունը մեծապես կօգնի ոչ միայն միջնադարյան հայ մշակույթի հարցերով պաշտօնը մասնագետներին, այլև բոլոր նրանց, ովքեր հետաքրքրվում են նաև հայ միջնադարյան հոգևոր մշակույթի հարցերով:

ԵՂԻՇԵ ԱՎԱԳ ԲԱՀԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

